

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ
«ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Է. Ա. ՊԻՎԱԶՅԱՆ

Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» միջնադարյան հայ մատենագրության ամենաարժեքավոր հուշարձաններից մեկն է, մի անգնահատելի աղբյուր միջնադարյան հայոց պատմության, հասարակական դասերի ու դասակարգերի և նրանց փոխհարաբերություններին, սոցիալ-տնտեսական, գաղափարախոսական և շատ այլ բնագավառներին վերաբերող ամենաբաղմազան հարցերի ու պրոբլեմների քննարկման ու լուծման համար: Ուստի բնական է այն մեծ հետաքրքրությունը, որ գիտության, մասնավորապես հայագիտության մեջ ցուցաբերվում է այդ հուշարձանի նկատմամբ: «Դատաստանագրքին» են դիմում իրենց ուսումնասիրությունների բնթացքում ոչ միայն իրավագետները, այլև պատմաբանները, հասարակագետները (սոցիոլոգները), ազգագրագետները և նույնիսկ բժշկության պատմության մասնագետները և ուրիշ հետազոտողներ:

Քաղական հետազոտված է հենց ինքը՝ «Դատաստանագիրքը» իբրև մատենագրական երկ՝ տարբեր տեսակետներից, այդ թվում և բանասիրական-տեքստաբանական տեսակետից: «Դատաստանագրքի» մասին ուսումնասիրություններ ունեն Ղ. Ալիշանը, Բրոսսեն, Բիշոֆը, Վ. Բաստամյանցը, Մ. Ալեքսևսկեր, Ս. Արծրունին, Կ. Բասմաջյանը, Բ. Կյուլեսերյանը, Եղիազարովը, Խ. Սամվելյանը, Հացունին, Հ. Ոսկյանը, Մ. Աբեղյանը, Ա. Սուքիասյանը, Ա. Թովմասյանը և ուրիշներ: Այս ուսումնասիրությունների մի մասը վերաբերում է առանձին իրավաբանական խնդիրների՝ ըստ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», իսկ մյուս մասը բուն «Դատաստանագրքի» բանասիրական ու տեքստաբանական քննության: Այնուամենայնիվ մեզ հետաքրքրող այս հուշարձանի վերաբերյալ ուսումնասիրությունները սպառիչ չեն և նրան վերաբերող շատ հարցեր մնում են չլուծված: Դրան ավելացնենք նաև այն, որ հայտնաբերվել են մի շարք նոր ձեռագրեր, բացահայտվել են բանասիրական նոր տվյալներ, որոնք ստիպում են այլ տեսանկյունով քննել ու լուծել մի շարք հարցեր: Ուստի և ողջունելի է Գոշի Օրենսգրքի ուսումնասիրության ամեն մի ձեռնարկում, պայմանով, որ այն կատարվի բանիմացորեն և նախորդ հետազոտողների ուսումնասիրությունների արդյունքների հաշվառումով ու ըստ արժանվույն գնահատությամբ:

«Դատաստանագրքի» ուսումնասիրությանն է ձեռնարկել Մատենադարանի աշխատակից Խ. Թորոսյանը, և արդեն տպագրել է իրեն հոգված, Մատենադարանի «Բանբերում»՝ «Երկու խմբագրություն Մխիթար Գոշի Դատաստանագրքի», «Պատմա-բանասիրական հանդեսում»՝ «Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձեռագրերն ու խմբագրությունները» և Ակադեմիայի «Տեղեկագրում»՝ «Մխիթար Գոշի Դատաստանագրքի առնչակցությունը Աստվածաշունչ

գրոց հետ» վերնագրերով: Այս հոդվածներին և նրանց մեջ արժարժված խնդիրներին է, որ մենք ցանկանում ենք անդրադառնալ:

Իր հոդվածների հենց սկզբում հոդվածագիրը հայտարարում է, թե «Մխիթար Գոշի Դատաստանագիրքը շատ քիչ է ուսումնասիրված: Այն հանգամանորեն չի քննված. մանավանդ, բանասիրական առումով»¹:

Ծիշտ չէ: Զխոսելով մեր անվանի բանասերներից մի քանիսի՝ Օրենսգրքի բանասիրական կողմին վերաբերող մի շարք յուրջ ուսումնասիրությունների ու հոդվածների մասին, հիշենք միայն մի հանգամանք:

Միջնադարյան մատենագիտական հուշարձաններից Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» առաջինն է, որ ունեցել է գիտական-քննական հրատարակություն, այն էլ գիտական բարձր կատարմամբ: Խոսքը Վ. Բաստամյանցի հրատարակության մասին է: Այս հրատարակությունը կատարված է երկու խումբ ներկայացնող մոտ 10 զրչագրերի հիման վրա՝ գիտական հրատարակությունների դասական մեթոդով, ձեռագրերի մանրակրկիտ համեմատությամբ և տարրնթերցումների բարեխիղճ ներկայացմամբ, աշխատասիրողի բազմաթիվ ու բազմազան շատ արժեքավոր բանասիրական ու տեքստաբանական դիտողություններով հանդերձ, դիտողություններ, որ ի վիճակի էր անել միայն Բաստամյանցի նման բազմակողմանի զարգացման տեր, իրավագիտության, պատմության, հայագիտության, զրաբարին, տեքստաբանությանը քաջատեղյակ մի հետազոտող:

Այս տեսակետից օտարոտի են հնչում Թորոսյանի՝ «Բանբերում» տպագրված հոդվածի հետևյալ տողերը.

«Դատաստանագրքի ձեռագիր օրինակների ուսումնասիրությունն ու համեմատությունը տպագրի հետ պարզում է սակայն, որ Բաստամյանցի հրատարակությունն արտահայտում է ձեռագրախմբերից միայն մեկի պատկերը և ոչ մի պատկերացում չի տալիս Դատաստանագրքի այն ձեռագրերի մասին. որոնք արմատապես տարբերվում են տպագրից»²:

Մեզ համար պարզ չէ, թե այս տողերի հեղինակը համոզված է արդյոք թե ճշմարտություն է գրում: Պարզ է մի բան՝ որ Բաստամյանցի հրատարակությունը ներկայացնում է Գոշի «Դատաստանագրքի» ձեռագրերի բոլոր խմբերը, որոնց պատկերը ամենայն մանրամասնությամբ և ակներևությամբ տրված է այդ հրատարակության մեջ, ըստ որում բուն բնագրի և նրա տողատակերում գրված այլընթերցումների ու տարբերակների հիման վրա կարելի է ուղղակի տպագրից վերականգնել աշխատասիրողի օգտագործած յուրաքանչյուր ձեռագիր:

Վերևում բերված քաղվածքից անմիջապես հետո կարդում ենք. «Ձեռագրերի ուսումնասիրությունը միաժամանակ ցույց տվեց, որ Դատաստանագիրքը մեզ է հասել երկու տարբեր խմբագրությամբ»³:

Այս քաղվածքի ընթերցողին թվում է, թե «Դատաստանագրքի» երկու խմբագրություն ունենալու փաստը ձեռագրերի ուսումնասիրությամբ առաջին անգամ հայտնադործում է Թորոսյանը: Այնինչ բանասիրության մեջ վաղուց

1 «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 137 (այսուհետև՝ «Հանդես»):

2 «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 57 (այսուհետև՝ «Բանբեր», ընդգծ. մերն է—Է. Պ.):

3 Նույն տեղում:

նկատված իրողություն է դա. առաջին անգամ այն նկատելու նշել է Բաստամյանցը, ապա և Կարստը: Թորոսյանը չի թաքցնում, որ այդ նկատել են Բաստամյանցն ու Կարստը, բայց կշտամբում է նրանց այն բանի համար, որ այդ խմբագրությունները տարբերելիս նրանց մոտեցումը ձևական է եղել: Բաստամյանցը նշել է միայն «երկու խմբագրությունների միջև եղած ձևական տարբերությունները»⁴, — գրում է հողվածագիրը, — նրա դասակարգումը հիմնված է առաջին հայացքից աչքի ընկնող արտաքին տարբերությունների վրա»⁵: Կարստը ձևադրախմբերի (իմա՝ խմբագրությունների) «միջև ձևական զանազանությունից բացի ուրիշ տարբերություններ չի նկատում»⁶: «Ձևագրերի, հետևապես նաև խմբագրությունների, դասակարգումը Կարստը կատարում է նկարագրական, եղանակով, ձևական-դոգմատիկական մեթոդով, որը մի ժամանակ իշխում էր արևմտյան իրավագիտության մեջ»⁷:

Հայագիտության երկու մեծ երախտավորներին այսպիսի, ինչպես կտեսնենք, միանգամայն անտեղի, կշտամբանքներ նետելուց հետո Թորոսյանը այնուհետև ուղղակի մեղադրում էլ է նրանց: «Խմբագրությունների մեջ Կարստը չի տեսնում, — գրում է Թորոսյանը, — վստային-դասակարգային և սոցիալ-տնտեսական տարբեր շահերի արտացոլում, այդ պատճառով խմբագրությունների ստորաբաժանման հիմքում դնում է միայն ձևական կամ լեզվա-ոճական առանձնահատկություններ»⁸:

«Վստային-դասակարգային և սոցիալ-տնտեսական տարբեր շահերը» պահանջում են տարբեր օրենսդրեր, և չեն կարող առաջանալ միևնույն օրենսդրի, միևնույն դատաստանագրքի տարբեր խմբագրություններից: Այս կամ այն հասարակածում դործող օրենսդիրքը կարող է ենթարկվել խմբագրական բնույթի փոփոխությունների, որոնք հետևանք ու արտացոլում կարող են լինել հասարակության մեջ տեղի ունեցող որոշ ներքին տեղաշարժերի, տեղաշարժեր, որոնք հասարակարգի բնույթի փոփոխություն չեն հատկանշում և դասակարգային տարբեր բովանդակություն չունեն: Առավելագույն դեպքում խմբագրական այս կամ այն փոփոխությունը կարող է լինել դասակարգային տարբեր ազդեցության ընդառաջելու հետևանք: Ուստի և միջնադարում, ֆեոդալական հասարակածում դործող հայկական միակ օրենսդիրքը՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», որքան էլ խմբագրություններ ունենա, դրանք բոլորն էլ դասակարգային և սոցիալ-տնտեսական մեկ բովանդակություն ունեն, բայց կարող են արտացոլել միջնադարյան հայ կյանքում տեղի ունեցած ոչ-որակային բնույթի փոփոխություններն ու տեղաշարժերը: «Դատաստանագրքի» խմբագրությունների, լավ է ասեն՝ խմբերի, մեջ եղած տարբերությունների միջոցով հասարակական փոփոխություններին հետամուտ լինելը, դրանք բացահայտելն ու պարզելը գիտական տեսակետից շնորհակալ դործ է և պետք է արվի:

Թորոսյանը կարծում է, թե Վատաստանագրքի խմբագրությունները «դասային-դասակարգային և սոցիալ-տնտեսական տարբեր շահերի արտացոլում» են, մինչդեռ այդ խմբագրությունները առկա են «Վատաստանագրքի» ստեղ-

⁴ «Բանբեր», 1962, էջ 57:

⁵ «Հանդես», էջ 137:

⁶ «Բանբեր», էջ 58:

⁷ «Հանդես», էջ 138:

⁸ Նույն տեղում:

ծումից անմիջապես հետո, XIII դարի սկզբում, մինչև Մխիթար Գոշի մահը՝ 1213 թ., մի ժամանակահատված, երբ, ինչպես հայտնի է, հայ հասարակությունը սոցիալ-տնտեսական հեղափոխման չի ենթարկվել և իր դասային-դասակարգային բնույթը չի փոխել:

Հայտարարելով, որ երկու խմբագրությունները տարբերելիս բաստամյանցի և Կարստի նկատառումները սոսկ ձևական են, բայց խմբագրությունների միջև կան էական տարբերություններ, հոգվածագիրը քիչ ճիշդ չի գործադրում այդ «էական»-ները ցույց տալու համար: Ընդ ինչ են դրանք, ինչ արժեք ունեն, իսկապե՞ս «էական» են՝ այդ մասին կխոսենք քիչ հետո: Այժմ բանասիրական այն հարցերի մասին, որոնց վրա երկար կանգ է առնում հոգվածների հեղինակը:

«Երկու խմբագրությունների գոյությունը,—գրում է նա,—ինքնին առաջացնում է հարցեր, որոնց լուծումը շահեկան է Դատաստանագրքի հետ կապված մի քանի բավական մութ, բայց կարևոր հանգամանքներ պարզելու համար: Ամենից առաջ. ինչի՞ հետևանք է, ինչո՞ւ և ինչպես է առաջացել երկրորդ խմբագրությունը, որ խմբագրությունն է սկզբնականը, երբ է առաջացել մյուսը, ո՞վ է վերջինիս հեղինակը և այլն: Վերջապես, կարևոր նշանակություն ունի Դատաստանագրքի ավարտման թվականի ճշտումը»:

Չենք առարկում, սրանք կարևոր հանգամանքներ են, բայց բանասերի համար «բավական մութ» չեն:

Տեսնենք, թե ինչպես, ինչ եղանակով ու մակարդակով են քննարկված այդ հարցերը և իրոք լուծված են:

Հոգվածագիրը նախ խոսում է վերջին՝ «Դատաստանագրքի» ավարտման թվականի հարցի մասին, ուստի հենց այդ հարցից էլ սկսենք: Այս հարցը քննության նյութ առնելիս հոգվածագիրն, ըստ երևույթին, մղում է տվել բանասիրության մեջ նոր բան ասելու զայնթաղությունը. մենք այդպես ենք կարծում, որովհետև իսկապես «Դատաստանագրքի» ստեղծման ժամանակի մասին վիճելի խնդիր չկա, քանի որ այդ մասին գոյություն ունի «Դատաստանագրքի» հեղինակի հաղորդումը: Այս հաղորդումը բերում է ինքը Թորոսյանն էլ, բայց անսպասելիորեն այնպիսի եզրակացության է հանդում, որ ընթերցողը մտածում է, թե անհասկանալի են մնացել զրաբար ամենապարզ նախադասությունները:

Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» բաղկացած է երկու մասից՝ «Եկեղեցական կանոնք» և «Աշխարհական օրենք»։ Այդ մասերից առաջ հեղինակը գրել է «Նախագրությունը», որի մեջ բացատրում է օրենսգրքի ստեղծման հանգամանքները, դատավարության ու դատակազմության դանդաղ հարցեր, իր իրավաբանական հայացքները և այլն: Բուն Դատաստանագիրքը կազմում են վերջին երկու մասերը: Հեղինակի կարծիքով ժամանակի ընթացքում օրենսդրություններ են փոփոխման ու կատարելագործման, այդպես էլ իր «Դատաստանագիրքը»։ «Բայց պարտ է զիտել, զի ո՛չ թէ այս միայն է զիրս դատաստանի գոր ալժմս զրեմբ, և ոչ թէ ի մէնջ միայն: պարտ է առնուլ զաւարտումն, զի զկանոնաց ունի զնմանութիւն: Զի որպէս կանոնք զի ո՛չ միանգամ եղաւ և ոչ ի միում տեղոջ և ոչ ի միոջէ, այլ սակաւ սակաւ և ի բազում ժամանակս և ի բազմաց եղաւ և եղեալ լինի մինչև յաւիտեան... Քանզի կանոնաց

հրամանք է ի տարուջն երկիցս անդամ ժողով լինել և քննել թէ յաշխարհի նորագոյն ինչ իրք յայտնիցին, այնորիկ սահմանս և կանոնս հաստատել և ուղղել: Այսպէս պարտ է լինել և դատաստանիս իրաց, զի որքան նորագոյն իրք պատահի և քննեսցի յիմաստնոց և հատցի դատաստան՝ զնոյն գրել ի գիրս յայս»¹⁰:

Ըստ Մխիթարի օրենսգիրքը ոչ թե միանգամից, այլ հետզհետե (առ սակաւ սակաւ) գրվող բան է, դատական պրակտիկան անընդհատ հարստացնելու է այն («որքան տեսցի և լինիցի դատաստան յիմաստուն արանց՝ զնոյն գրել ի կարգի»), ուստի և «Դատաստանագրքի» ավարտման մասին չէր խոսելու հեղինակը, որովհետեւ ինքն էլ չգիտեր, թե երբ է ավարտելու:

Այսպիսի հայացք ունենալով օրենսգրքերի վերաբերյալ, բնականաբար Գոշը իր «Դատաստանագիրքը» ավարտվող չէր կարող համարել, ուստի և իր հիշատակարանը դնում է նախադրության վերջում և ոչ գրքի վերջում. «Բայց զծագրութիւն յիշատակիս,—գրում է Մխիթարը,—ի նախադրութիւնս գրոցս դատաստանի եղև, զի կատարած սորա ինձեռն մեր միանգամայն ոչ է, որպէս ասացեալ է կանխաւ գալատճառն»¹¹: Այս իսկ հիշատակարանում նա գրում է. «Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն (ՎՁԲ. իրողութեան) եղև ի թուականութեանս հայոց ՈԼԳ (=733+551=1184)... ձեռնտուությամբ հօր Յովսէփայ, և ևղբօր Պաւղոսի յորդորմամբ յառաջարկութիւնս»¹²:

Հեղինակը շատ պարզ է ասում՝ իր գործը, դատաստանագիրք գրելը ձեռնարկել է, սկսել է 1184 թվականին. երբ է ավարտել այդ մասին ոչ մի խոսք չկա:

Սակայն հոգիածագիրը փորձում է հավատացնել, թե 1184 թ. «Դատաստանագիրքը» արդեն ավարտված էր: Նա գրում է. «Եվ եթե Մխիթարն ասում է, որ Պաղոսի ու Հովսէփի աջակցությամբ ու հորդորմամբ սկսած գործը «եղև» 1184 թվին, նշանակում է այդ թվին Դատաստանագիրքը գրված պատրաստ էր»:

Նախ՝ զբարբար լեզվին հեռավոր ձանթություն իսկ ունեցողը կնկատի, որ «ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն եղև» նշանակում է՝ մենք այս գործը ձեռնարկեցինք, սկսեցինք, «եղև»-ը վերաբերում է ոչ թե «սկսած գործին», այլ գործի սկսելուն, ոչ թե «սկսած գործը «եղև», ավարտվեց, ինչպես ծոռում է Թորոսյանը, այլ գործի սկիզբը, ձեռնարկությունը եղավ, գործը սկսվեց:

Օրենսգրքի մասին այնպիսի նրբամիտ հայացք ունեցող մարդ, ինչպիսին Մխիթարն է, ինչպես վերևում բերված քաղվածքներից տեսանք՝ չէր կարող ոչ ավարտուն, ո՛չ էլ ավարտված դատաստանագրքի մասին խոսել: Նախադրության մեջ գործածված ոճից էլ պարզ ի պարզո նկատելի է, որ հիշատակարանը գրելիս բուն դատաստանագիրքը ոչ միայն ավարտված չէր, այլև, թերևս, նոր միայն պետք է սկսեր: Նախադրության մեջ կարդում ենք, օրինակ. «...այս գիրք որ ի մէնջ սկսեալ եղև, եթէ ի մէնջ առ սակաւ սակաւ գրեալ լինի, և եթէ ի բազմացն և յայլ և յայլ ժամանակս գրեսցի...»¹³: Բարգմանենք այս հատվածը աշխարհաբար. «...այս գիրքը, որ մեր կողմից սկսվեց, եթե մեր կող-

10 «Դատաստանագիրք», նախադրութիւն, էջ 66—67:

11 Նույն տեղում, էջ 74:

12 Նույն տեղում, էջ 69—74:

13 Նույն տեղում, էջ 68:

մից հետզհետե (քիչ-քիչ) զրվի կամ ուրիշ շատերի կողմից այլ և այլ ժամանակներում զրվի...» (և կամ վերածելով ներդործական կառուցվածքի նախադասության՝ «... այս դիրքը, որ մենք սկսեցինք, եթե մենք հետզհետե (քիչ-քիչ) զրենք և կամ ուրիշ շատերը այլ և այլ ժամանակներում զրեն...»):

Հեղինակն, ուրեմն, խոսում է հետզհետե զրելի մասին («եթե ի մէջ առ սակաւ սակաւ զրեալ լինի»), և ոչ թե զրվածի, ավարտվածի. նա հայտնում է, թե ինքը հետզհետե զրելու է Դատաստանադիրքը, և ոչ թե զրել է:

Մի այլ տեղ Մխիթարը գրում է. «... զի ոչ թէ մտացածին բանիւք զրեմի զսա, այլ ի զրոց և յազգաց ժողովեմի՝ զսա ի պէտս հաւատացելոց: Բայց պարտ է գիտել, զի ոչ թէ այս միայն է զիրս դատաստանի, զոր ալմսս զրեմի»¹⁴:

Այստեղից պարզ երևում է, որ Մխիթարը խոսում է մի զրքի՝ դատաստանադիրքի մասին, որը գրում է, զրելու ընթացքի մեջ է, և ոչ թե ավարտված, նա զործածում է սահմանական եղանակի ներկա ժամանակի ձևեր՝ իրենց բուն նշանակությամբ:

Վերջապես բերենք և հիշատակարանի վերջին մասում զրված խոսքը: «Եւ արդ՝ որքան է կար ի զործ անկանիմք հիսել զկնի զիրս դատաստանի»:

Գրաբարով այս նախադասության իմաստը դժվար ըմբռնելի է, ուստի դարձյալ թարգմանենք աշխարհաբար. «Եւ արդ, որքան կարողություն ունենք զործադրենք (սրանից՝ նախադրությունից) հետո շարադրելու (հլուսելու) դատաստանի նյութերը (հանգամանքները)»- դատաստանադիրքը:

Այսպես ուրեմն՝ «Դատաստանադիրքի» հեղինակը հաղորդում է, որ ինքը «Դատաստանադիրքը» ձեռնարկել է զրել 1184 թ. և հետզհետե զրելու է, իսկ «Երկու խմբագրություն Մխիթար Գոշի Դատաստանադիրքի» վերնագրով հոգվածի հեղինակ Թորոսյանի կարծիքով՝ Մխիթար Գոշը 1184 թ. ավարտել է «Դատաստանադիրքը». «1184 թվականին Դատաստանադիրքը ավարտված էր, պատրաստ և մի ամփոփ ամբողջություն էր կազմում»¹⁵, — գրում է նա:

Ընթերցողը, անշուշտ, կհավատա «Դատաստանադիրքի» հեղինակ Մխիթար Գոշին և ոչ թե Թորոսյանին:

Ինչպես վերևում ասացինք, «Դատաստանադիրքը» կառուցվածքային տեսակետից մեզ է հասել երկու տեսքով, ըստ որում երկուսն էլ ունեն նախադրությունը, իսկ բուն դատաստանադիրքը մեկում բաժանված է երկու մասի՝ եկեղեցական և աշխարհական, իսկ մյուսը՝ շունի այս բաժանումը, մասերը միասին են:

Հոգվածագրի կարծիքով «Դատաստանադիրքը իր սկզբնական խմբագրության ձևով իրոք երկու մասից էր կազմված՝ նախադրություն և բուն Դատաստանադիրք (առանց մասերի)»¹⁶:

Տեսնենք, թե որքան ճիշտ է այս կարծիքը: Իր կարծիքը ասպացուցելու համար Թորոսյանը դիմում է Մխիթարի՝ իր աղբյուրների օգտագործման եղանակին: Հայտնի է, որ «Դատաստանադիրքը» պատրաստելիս հեղինակը օգտագործել է հայ իրականության մեջ պործող միակ օրենսդիրքը՝ Կանոնադիրքը, հին և նոր կտակարաններ և այլ աղբյուրներ: Բանասիրության մեջ

¹⁴ Նույն տեղում, էջ 66:

¹⁵ «Բանբեր», էջ 63:

¹⁶ Նույն տեղում, էջ 62:

նկատել են, որ «Դատաստանագրքի» երկու մասերի բաժանված խմբագրության առաջին՝ եկեղեցական կանոնների մասում 75 հոդված¹⁷ պատրաստելիս Մխիթարը իբրև աղբյուր ունեցել է Կանոնագիրքը՝ Ս. Տիգրանյանը¹⁸ ցույց է տվել, որ «Դատաստանագրքի» առաջին մասի այդ 75 հոդվածներն ունեն այնպիսի հերթական դասավորություն, որից երևում է, որ Մխիթարը պահպանել է Կանոնագրքի մի տարբերակի կանոնախմբերի հերթական կարգը, այսինքն՝ օգտվել է Կանոնագրքից՝ կանոնախմբերի հաջորդականությամբ, հերթականության մի քանի շեղումներով։ ավելին՝ ամեն մի կանոնախմբից օգտվելիս՝ պահպանել է կանոնների հերթական կարգը (իհարկե, ոչ անմիջական հաջորդականությամբ, քանի որ նա օգտագործել է ոչ բոլոր կանոնները)՝ դարձյալ նույն կարգի մի քանի շեղումներով։ Այսպես, օրինակ, Գոշր օգտագործել է Կղեմի կանոնախմբի 38, 54, 61, 63, 67, 68, 70, 75, 83-րդ կանոնները, որոնք համընկնում են համապատասխանաբար «Դատաստանագրքի» առաջին մասի 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32 և 73-րդ հոդվածներին։

Երկու մասերի բաժանված «Դատաստանագրքում» իրարից հեռու են ընկած Կանոնագրքի որևէ տվյալ կանոնախմբի հոդվածները։ Բայց այստեղ կա մի շատ հետաքրքիր և ուշադրավ բան. երբ երկրորդ մասից համապատասխան հոդվածներ տեղափոխում ենք I մասի մեջ և տեղավորում համապատասխան կանոնախմբերի և նրանց կանոնների հերթականությամբ, ստացվում է «Դատաստանագրքի» հոդվածների այնպիսի դասավորություն, որպեսին կա այն ձևագրերում, որոնց մեջ «Դատաստանագիրքը» երկու մասի բաժանում չունի։

Այսպես, ուրեմն՝ Մխիթարը իր աղբյուրներից օգտվել է մի սկզբունքով՝ աղբյուրների իրեն հետաքրքրող կանոնների ու հոդվածների հաջորդական հերթականությամբ և քանի որ աղբյուրների հերթականությունը ավելի լավ պահպանված է «Դատաստանագրքի» այն ձևագրախմբերում, որտեղ երկու մասի բաժանումը չկա,— ուստի և, ասենք քննության առարկա հոդվածների հեղինակի բառերով՝ «Դատաստանագիրքը սկզբում եղել է այն ձևով, ինչ ձևովով այն ներկայացված է A խմբի (իմա՝ բաժանում չունեցող— է. Պ.) ձևագրերում։ Կանոններ արտահայտող հոդվածների ընդհատումները, որ առկա են B խմբում (իմա՝ բաժանում ունեցող— է. Պ.), առաջացել են հետո, երբ Դատաստանագրքի հոդվածների ընդհանուր հաջորդական շարքից որոշ հոդվածներ, ըստ որում ոչ թե առանձին-առանձին, այլ հաճախ խմբերով, առանձնացվել են, որպես երկրորդ մաս»¹⁹։

Ուրեմն՝ հոդվածագրի կարծիքով A խմբագրությունը սկզբնականն է՝ A-ից առաջացել է B-ն։

Բայց ահա ինչ է դրում նա հաջորդ պարբերության մեջ. «Ասածը հաստատվում է մի շատ կարևոր փաստով ևս։ Դատաստանագրքի B խմբագրությունից, ճշտության մեծ մոտավորությամբ, կարելի է վերականգնել A խմբագրության սիստեմը, մինչդեռ հակառակը անկարելի է»²⁰։

¹⁷ «Դատաստանագրքի» առաջին՝ եկեղեցական մասի հոդվածները ընդունված է կոչել կանոններ. այստեղ և հետագայում մի երկու անգամ քննարկում ենք հոդվածը։

¹⁸ Տե՛ս Ս. Тигранян, «Судебная книга» Мхитара и «Книга канонов», Известия Кавказского ист.-археологич. института, հատ. III, Թիֆլիս, 1925, էջ 62—72։

¹⁹ «Բանբեր», էջ 68։

²⁰ Նույն տեղում։

ձիշտն ասած՝ անկարելի է հասկանալ Թորոսյանի զրածր. եթե սկզբնականը A-ն է, որից առաջացել է B-ն՝ էլ ինչպե՞ս A-ից չի կարելի ստանալ (կամ վերականգնել) B-ն: Եթե A-ից ստացվել է B-ն, A-ի սխտեմից էլ կստացվի B-ի սխտեմը: Ուղղակի ասենք, որ միշտ էլ A-ից կարելի է ստանալ B-ն և՛ հակառակը:

Քայց թողնենք այս հակասությունը, առանց այն որակավորելու, և քննենք Թորոսյանի եզրակացությունը՝ A խմբագրության սկզբնականը լինելու վերաբերյալ:

Այս եզրակացության փաստարկը ուշագրավ է: Սակայն ոչ ամեն ուշագրավ ու հետաքրքիր փաստարկ կարող է վերջնական ասպացույց լինել. բանասիրական աշխատանք կատարողին, առավել ևս՝ երբ այդ աշխատանքը վերաբերում է զարևոր առաջ ստեղծված մի հուշարձանի, ուր է հատուկ լինի երկրայություն, կասկածի, միակ՝ թող որ այն լինի ուշագրավ ու հետաքրքիր, փաստից ուղղագիծ ու պատասխանատու եզրակացություն հանելու գայթակղությունից խուսափելու գիտակցությունը: Այս դեպքում բանասերը, և առհասարակ ամեն մի հետազոտող, փաստերի ու փաստարկների բաղմակողմանի քննարկմամբ զերծ կմնա հայտնաբերող եզրակացություններից: Այնինչ հողվածագրի խնդրո առարկա եզրակացությունից երևում է, որ նա ուղղակի գայթակղվել է մեկ փաստից, շտապել է, «Դատաստանագիրքը», նրա ձևագրերն ու ձևագրերի խմբերն անհրաժեշտ չափով չի ուսումնասիրել:

Նախ. արդեն ասվեց, որ Կանոնագրի մի խմբավորման կանոնախմբերի և սրանց կանոնների հերթական կարգը թեև հիմնականում պահպանված է «Դատաստանագրքում», բայց կան նշանակալից շեղումներ. օրինակ՝ կանոնախմբերը Մխիթար օգտագործել է հետևյալ հերթականությամբ՝ 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 34, 10, 2, 15, 16, 26, 18, 20, 25, 38: Ինչպես տեսնում ենք, հերթականության շեղումները զգալի են: Թորոսյանի կարծիքով այս շեղումները սկարող են վկայել միայն, որ Մխիթարի տրամադրության տակ հավանաբար եղել է Կանոնագրի մի ձևագիր, որի մեջ կանոնախմբերը փոքր-ինչ այլ դասավորություն են ունեցել»²¹: Սակայն եղած հերթականությունը այդպիսի եզրակացությունը բացառում է: Ինչպես նկատելի է՝ նույն կանոնախմբեր (2-րդ, 4-րդ) օգտագործված է երկու անգամ, երկու տարբեր, իրարից հետո բնկած տեղերում, որոնց ընթմիջում են ուրիշ կանոնախմբերի հողվածներ: Չի կարելի պատկերացնել Կանոնագրի մի ձևագիր, որտեղ երկու անգամ զրգված լինել 4-րդ կանոնախմբեր, Մխիթարն էլ միամտաբար երկու անգամ օգտագործելը:

Նույնպիսի շեղումներ կան նաև միևնույն կանոնախմբի կանոնների օգտագործման մեջ, բայտ որում սրանք մի շարք դեպքերում ընդմիջվում են այլ աղբյուր ունեցող հողվածներով (տե՛ս և հմտ., օրինակ, Հարանց հետևողաց կանոնախմբի կանոններին համապատասխան հողվածների դասավորությունը «Դատաստանագրքում»):

Այս շեղումները շատ ավելի լուրջ պատճառներ ունեն և, մեր կարծիքով, բխում են «Դատաստանագրքի» հեղինակի սկզբունքներից, հատկանշում են լուրջ սկզբունքների գոյություն, սկզբունքների հետևողականություն, և ոչ թե աղբյուրներին մեխանիկական հետևողություն: Իրոք, եթե Մխիթարը աղբյուր-

²¹ «Քաներ», էջ 67:

ներից քաղել է այս կամ այն հոդվածը և աղբյուրների հետևողությամբ էլ շարել իրար հետևից, ապա հարց է առաջանում՝ ինչու և նա վերցրել է, ասենք, այս կանոնը և ոչ նրան հաջորդող մյուս կանոնը, ինչու 2-րդն ու 3-րդը, 6-րդը և բաց է թողել 4-րդն ու 5-րդը:

Ընդունված է ասել, թե «Դատաստանագիրքը» որոշակի սխառնամիտ չունի: Այս տեսակետը մերժելի է: Մեր հոդվածագիրն էլ կրկնում է այդ կարծիքը. «Դատաստանագիրքը, հատկապես Ա խմբագրությունը, չունի իր սեփական սխառնամիտ, որովհետև հայտնի չափով նույնությամբ ընկալել է իր զրավոր աղբյուրներից երկուսի՝ Կանոնագրքի ու Աստվածաշնչի սխառնամիտ»²²,—գրում է նա: Բանն այն է, որ Մխիթարի գրչի տակից դուրս եկած «Դատաստանագիրքը» պետք է որ ունենար իր որոշակի սխառնամիտ: Գոշը անգամ իր առականների ժողովածուն կազմել է որոշակի սխառնամիտ: Մի հեղինակ, որը, ինչպես լավագույնս ցույց է տվել ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, «առաջ էր րաշում հայ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների ոչ միայն եկեղեցական, այլև Լազաբական անկախության գաղափարը»²³, հետևողականորեն անցկացնում էր իր քաղաքական իմաստասիրությունը, իր հումանիզմը, թագավորական իշխանության համակենտրոնացման գաղափարը, մոլորացնում էր Աստվածաշնչի օրենքների սկզբունքները, ձգտելով «համերաշխություն ստեղծել այդ սկզբունքների, ֆեոդալական ուսուցիչ հարաբերությունների ու կյանքի գործնական պահանջների միջև»²⁴, չէր կարող օրենսգիրք ստեղծել առանց որոշակի սկզբունքի: Մի օրենսգիրք, որի «պահանջը առաջանում էր նաև Հայաստանի և Անդրկովկասի ֆեոդալական հասարակության ներսում սրվող սոցիալական և քաղաքական ներքին հակադրությունները մեղմացնելու պահանջից, և առաջին հերթին՝ ֆեոդալական տիրող հարաբերությունների վեմ պայմաբեկող դուրս գալու մասունքների դիմադրությունը հաղթահարելու և սրանց ուժերը «առտաբիճակ» դեմ համակենտրոնացնելու կարիքից»²⁵, չէր կարող որոշակի սխառնամիտ չունենալ:

«Դատաստանագիրքը» ունի որոշակի սխառնամիտ, և հետագոտողի պարտքն է ուսումնասիրել ու որոշել այդ սխառնամիտ սկզբունքները: Եթե Ա խմբագրության մեջ որոշակի սխառնամիտ չկա՝ այդ բանը մեզ պետք է հուշի, որ այն Գոշի ձեռքով չի կազմված:

Այսպիսով՝ աղբյուրների օգտագործման մեջ հերթականության շեղումներն ու ընդմիջումները ինչ-որ բան ասում են Ա խմբագրության նախնականը չլինելու մասին. համենայն դեպս կասկածանքի տեղիք են տալիս:

Արդ՝ մի անգամ որ աղբյուրների օգտագործման մեջ կան շեղումներ ու ընդհատումներ այն տարրերակներում, որոնց մեջ «Դատաստանագիրքը» երկու մասի չի բաժանված, չէին կարող նույն աղբյուրից եկող հոդվածները այդպիսի շեղումներով ու ընդհատումներով գրվել մասերի բաժանված «Դատաստանագրքի» երկու մասերում. այստեղ ընդհատումը հենց առանձին մասերում լինելով է արտահայտվում:

²² Նույն տեղում, էջ 68:

²³ Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, 1, Երևան, 1957, էջ 279 (ընդգծումը հեղինակինն է):

²⁴ Նույն տեղում, էջ 282:

²⁵ Նույն տեղում, էջ 281 (ընդգծ. հեղինակինն են):

Երկրորդ. Թորոսյանը դրում է, թե «Դատաստանագրքի Խ խմբագրությունից (իմա՝ Երկու մասի բաժանված— է. Պ.), ճշտության մեծ մոտավորություն, կարելի է վերականգնել Ա (իմա՝ բաժանում չունեցող— է. Պ.) խմբագրության սիստեմը»։ Հոգվածագիրը իրեն թույլ չի տալիս մտածել կամ կասկածել, որ այդ «կարելին» հետազայում են արել, նետագայում են երկու մասի բաժանված «Դատաստանագրքի» մասերը միացրել և կազմել բաժանում չունեցող տարբերակը։

Երրորդ. հայտնի է, որ Մխիթարը որոշակիորեն տարբերություն է դնում կանոնի և օրենքի միջև, տարբերակում է կանոնը՝ իբրև «հոգույն դատաստան»²⁶, իբրև հոգևոր օրենսդրություն, օրենքից՝ իբրև «մարմնաւոր դատաստան»²⁷, իբրև աշխարհիկ օրենսդրություն. «Զի կանոնք հոգույ ուղղիչ է և դատաստան—մարմնոյ»,—գրում է նա։

Մխիթարի ժամանակը առաջադրել էր աշխարհիկ օրենսգրքի պահանջը։ Եվ նրա նպատակն է եղել ստեղծել «մարմնաւոր դատաստանի» դիրք, աշխարհիկ օրենսգիրք։ Այդ մասին հենց ինքը՝ Մխիթարն էլ երկար խոսում է նախադրության մեջ։

Ուրեմն՝ բնական է կարծել, որ նա կազմած պետք է լինի «Դատաստանագրքի» հենց այն տարբերակը, որը բաժանված է եկեղեցական և աշխարհական մասերի։

Այս հանգամանքը նկատի ունի և հոգվածագիրը։ Բայց քանի որ նա կարծում է, որ սկզբնականը մասերի շրջանված տարբերակն է, ուստի ստիպված է մի բոլորովին անհիմն եզրակացություն անել, ըստ որի Մխիթարը իր զլխավոր նպատակին՝ աշխարհիկ օրենսգիրք ստեղծելուն, բավարարություն տալու համար վերախմբագրում է առաջին տարբերակը, բաժանում երկու մասերի՝ եկեղեցականի և աշխարհիկի, հաճախ փոխում նաև հոգվածների բովանդակությունը, որոնք, իբր սկզբունքորեն տարբերվում են սկզբնական տարբերակի համապատասխան հոգվածներից։

Վերևում մեր նշած հանգամանքները լուրջ կասկածանքների տեղիք են տալիս՝ մասերի շրջանված տարբերակը սկզբնականը համարելու վերաբերյալ։ Կասկածանքները, սակայն, դեռևս ասպացույց չեն։ Բանասիրական հարցերի համար անհրաժեշտ են, այսպես ասած, առարկայական ասպացույցներ։

Այսպիսի առարկայական ասպացույցներ մեզ տալիս են երկու տարբերակների համեմատությունը և ձեռագրերի տեքստաբանական հետազոտությունը։ Մրանցից այստեղ կրկրենք միայն առաջինի արդյունքները, երկրորդինը թողնելով մի այլ առիթի։

Այսպես կոչված Ա խմբագրության 33-րդ հոգվածը հետևյալն է.

«Եթէ կռուիցին արք և մինն պատահի անկատար լինել և յանդգնեալ փետիցէ զմարուս կատարելոյն, դատաստան լիցի կրկին մասամբ զհերսն հատանել և գանիւ և ծեծիւ ըստ արժանոյն կսկծեցուցանել, մանաւանդ զի պատուաւոր անարգեաց։ Ապա թէ բռնագոյն և կամ պատուաւոր յանդգնեալն իցէ.

²⁶ «Դատաստանագիրք», նախադրութիւն, էջ 13։

²⁷ Նույն տեղում, էջ 18։ Կանոնի և օրենքի տարբերության մասին տե՛ս նաև նախադրութիւն, էջ 8—9, 12—13, 18—19, 1 մաս, էջ 85, 11 մաս, էջ 361 և այլուր։

միոյն ղդառութեան տուղանի կէսն լիցի ի տուգանս: Եւ այդ առ այդ լիցի, զի այլոց օրինակն ցուցեալ է ի կոռուց դատաստանաց»²⁸,

Մեզ հետաքրքրում է ընդգծված մասը, որտեղ հեղինակը հայտնում է, թե տվյալ դատաստանը (վճիոր) թող լինի այս կոնկրետ դեպքի համար, իսկ ուրիշ օրինակների (դեպքերի) մասին զրված է (ցույց է տրված, նշված է) կովի դատաստանի մասին հոգվածում, այսինքն՝ Գոշու հղում է այս հոգվածից առաջ զրված մի այլ հոգված: Գտնում ենք այդ հոգվածը. ունի «Վասն ժառանգաւորաց ի կոռու հարկանողաց» վերնագիրը: Սա բաժանում չունեցող բոլոր ձեռագրերում կրում է 42-րդ համարը, այսինքն ավելի ետ է զրված²⁹: Չի՞ կարծում, արդյոք, Թորոսյանը, որ մասերի բաժանում չունեցող տարրերակում հոգվածի տեղը այն չէ, ինչ որ զբաղ է Գոշը:

Այս հոգվածների կարգը բնական է երկու մասի բաժանված տարրերակում, որտեղ հղում ունեցող հոգվածը գտնվում է II մասում (N 12), իսկ այն հոգվածը, որին հղում է՝ I մասում (N 26):

Մի ավելի ակնառու օրինակ. մասերի չբաժանված տարրերակների 37-րդ հոգվածը հետևյալն է.

«Կարգեցին առաքելաբն և եղին հաստատութեամբ՝ եթէ մի՛ որ անարդեսցէ և անդոսնեսցէ և արհամարանաւր կալցի գրահանայս թէ և կարի որ յանարդաց իցէ, զիտասցէ զի զաստուած անարդէ զի աստուծոյ սպաւաւոր է ի բարիս և համարս տայցեն ընդ հոգւոց ձերոց, ոչ գրեալ է զի իշխան ժողովրդեան քո մի՛ բանբասիցես»:

Իմ զայս դատաստան ուր նախ քան զսա Երեման քչի սակաւ ինչ գրեցաւ, այլ երկրորդել յօժաւեցաւ այժմ լառաբնական կանոնաց՝ ցուցանելոյ աղապաւ զմեծութիւն սպաւծոցն անարդողաց քահանայից, զի դատել զոյգ է զնոսա ընդ աստուածանարդս իրաւացի պատաստանաւ, ըստ այնմ՝ որ զձեզ անարդէ զիս անարդէ: Եւ որ չիցեն—և այն իսկ ըստ արժանոյն ցուցաւ»³⁰:

Դարձյալ ուշադրություն դարձնենք ընդգծված տողերի վրա: Այս հոգվածի առաջին մասը Առաքելական կանոնախմբի 25-րդ կանոնն է: Երկրորդ մասը Գոշի ավելացումը, որտեղ նա նշում է, որ ինքը այդ մասին, սրանից առաջ («նախ քան զնա»), մի ժամանակ («երբեմն»—ատենով) զբաղ է («գրեցաւ»—գրեցինք), իսկ այժմ երկրորդում է:

Բնական է, որ այն հոգվածը, որին հղում է Մխիթարը, պետք է զրված լինի սույն հոգվածից առաջ—չէ՞ որ հենց ինքը ասում է, որ դրանից առաջ է

²⁸ ՀՍՍՌ Դատենագրարանի ձեռ. N 2775, էջ 34ր—85ա: «Դատաստանագրքի» միահար հասարակելում ունեցող, մասերի չբաժանված տարրերակի մյուս ենթախմբում, որ Թորոսյանը «ի այլ հոգվածում անվանում է Դ խմբագրություն, սույն հոգվածը վերաշարադրված է այսպես. «Եթէ կոռուին արք Բ և մինն մալազ լինի և միւսն կատարեալ և ձգէ մալազ: և փետլ զմաւրուս կատարելոյն. դատաստան լիցի որ կտրեն զմալուսն մազն երկու տարպա՝ ռանի զկատարելոյն մաւրուսն քաշեաց և հան. և է փայտ ի վերայ թիկանցն տան: Ապա թէ՛ յաւաղ մարգոյն Լղն սպաւճառ կոռույն վրիժուց խնդրեսցի ի փորրերն զու վերոյ գրեցաւ. զի մի այլը այսպիսի իրս գործեսցեն» (Ձեռ. N 2593, էջ 57ր): Մեր կողմից ընդգծված բառերը նույն հղումն են արտահայտում:

²⁹ Այս հոգվածի բովանդակության կրկնությունը ներկայացնող մի այլ հոգված է նույն ձեռագրախմբում 60-րդ համարի տակ եղածը, ուրեմն դարձյալ հղող հոգվածից ետ զրված:

³⁰ ՀՍՍՌ Դատենագրարանի ձեռ. N 2593, էջ 58ր—59ա, N 2776, էջ 61ա—61բ: N 2775 ձեռագրում կան մի երկու այլրից փոփոխություններ, այդ թվում՝ «սակաւ ինչ» գրչական սխալով դարձել է «տակաւին ոչ», որ անիմաստ է:

գրված և որ ինքը երկրորդում է: Բայց ի՞նչ է պարզվում. Մխիթարի հղած, այս հոդվածից առաջ գրված հոդվածը բաժանում շունեցող տարրերակում ղրված է շատ հետո. սույն հոդվածը 37-րդն է, իսկ այն հոդվածը, որ առաջ է ղրել և որին հղում է՝ 105-րդ հոդվածն է՝ «Յաղագս դատաստանաց արհամարհողաց գրահանայս և զդատաւորս» վերնադրով: Ինչպես սպասելի էր՝ այդ հոդվածները ևս իրենց բնական տեղն ու կարգն ունեն երկու մասերի բաժանված տարրերակում. հղող, երկրորդվող, կրկնվող հոդվածը գտնվում է 11 մասում (№ 15), իսկ առաջինը, այս հոդվածը, որին հղում է՝ 1 մասում (№ 40):

Թվում է, թե պարզ է. Մխիթարը պատրաստել է երկու՝ եկեղեցական և աշխարհական՝ մասերի բաժանում ունեցող «Դատաստանադիրքը», նրա զրչի տակից դուրս է եկել այդ տարրերակը, սկզբնականը դա է, մասերի բաժանում շունեցող տարրերակը հետո է առաջացել, որտեղ մասերի բաժանումը վերացված է, հոդվածները վերադասավորված են: Ուրեմն՝ մեզմեջի է հոդվածագրի կարծիքը A խմբագրության սկզբնականը լինելու մասին:

Ինչպես տեսնում ենք թյուրիմացություն է «Դատաստանադիրքի» առկա երկու տարրերակներից մասերի բաժանում շունեցողը համարել Մխիթարի զրչի տակից դուրս եկածը: Ընդունելով այս թյուրիմացությունը իրեն : Համարտություն, Թորոսյանը աշխատում է որոշել, թե ո՞վ է պատրաստել B՝ երկու մասի բաժանված խմբագրությունը: Եւ ջանում է ապացուցել, որ երկուսի հեղինակն էլ Մխիթարն է, որ B-ն A-ի խմբագրված տարրերակն է: Իր ենթադրության հաստատման համար նա բերում է հետևյալ փաստարկները:

1. «Նախադրության Դ գլխում,—գրում է նա,—Մխիթարն ասում է, որ Դատաստանադիրքը ստեղծելով իր գործը ավարտված չի համարում, որ այնուհետև էլ շարունակելու է աշխատանքը այն լրացնելու և կատարյալ դարձնելու համար: Դատաստանադիրքի երկրորդ խմբագրությունը Մխիթարի ձրգտման իրականացումն է»³¹:

Արհեստական է Թորոսյանի դատողության հիմքը. Մխիթարը ոչ մի տեղ, ոչ էլ Նախադրության Գ գլխում նման բան չի ասում. նա այստեղ գիմելով Աղվանից կաթողիկոսին, սոսկ ուզում է ցույց տալ, թե «զինչ է զօրութիւն գրոցրս, գոր ձեռնարկեմքս»: Միշադրության առնենք վերջին բառերը՝ ու ձեռնարկում ենք, ու մենք ձեռնարկում ենք, այսինքն՝ սկսում ենք. ուրեմն «Դատաստանադիրքը» նոր էր ստեղծվելու. Մխիթարի մոտ խոսք չկա ավարտված աշխատանքի մասին, որը իրը խմբագրելու, «լրացնելու և կատարյալ էր դարձնելու»:

2. «Երկու խմբագրությունների լեզուն ու ոճը,—բերում է իր երկրորդ փաստարկը «Դատաստանադիրքի» խմբագրություններին վերաբերող հոդվածների հեղինակը,—միևնույն հեղինակինն են: Երկրորդ խմբագրությունում եղած բառերի, ոճի որոշ փոփոխությունները ավելի շուտ վկայում են, որ պատկանում են հեղինակին, քան կողմնակի մարդու»³²:

Սա, իսկապես ասած, փաստարկ էլ չէ, քանի որ միևնույն օրենսդրքի հոդվածների վերադասավորությունը, ում կողմից էլ կատարված լինի՝ լեզվի և ոճի տարրերություն չի առաջացնի: Իսկ այդ «որոշ փոփոխությունների» օրինակներ նա չի բերում, որպեսզի ընթերցողը տեսնի, թե արդյո՞ք դրանք

31 «Թանրեր», էջ 70:

32 Նույն տեղում:

հեղինակինն են: Մենք համեմատել ենք «Դատաստանագրքի» տարբերակները լեզվի և ոճի կողմից՝ որից պարզվում է, որ փոփոխությունները հետազայում են կատարվել: Օրինակներ կտեսնենք ներքևում:

3. Ահա և նրա երրորդ փաստարկը. «Սկզբնաղբյուրներում չկա որևէ հիշատակություն, որ ամենայն հավանականությամբ կլինեն, եթե երկրորդ խմբագրության հեղինակը ուրիշը լիներ»³³:

Մեր հին մատենագրությանը, մանավանդ սկզբնաղբյուրներին, շատ թեքիչ ծանոթ ամեն ոք գիտե, թե որքան միամիտ է այս տրամաբանությունը: Շատ ու շատ մատենագրական երկերում նույնիսկ հեղինակի մասին հիշատակություն չկա: Թորոսյանին քաջ հայտնի պետք է լինի. քանի որ նա օգտագործել է «Դատաստանագրքի» ձեռագրերը, որ դանցից շատերը հեղինակի՝ Մխիթար Գոշի անունն էլ չեն կրում:

4. Նույն բնույթի է նաև չորրորդ փաստարկումը. «Առաջին խմբագրության իրավաբանորեն անորոշ մի շարք սահմանումներ նույնությամբ մնացել են նաև երկրորդ խմբագրությունում»: «Եթե Դատաստանագրքի երկրորդ խմբագիր ունենար, ապա առաջին խմբագրությունում եղած որոշ հակասություններն ու իրավաբանական անորոշ սահմանումները երկրորդ խմբագրության մեջ չպետք է տեղ գտնեին, որովհետև դրանց վերացումը ամեն մի խմբագրի առաջին պարտականությունն է»³⁴:

Հոգվածագրի դատողությամբ առաջնորդվելով՝ պետք է ասենք, որ Սրմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» հեղինակն ու խմբագիրն էլ Մխիթար Գոշն է, որովհետև այնտեղ տեղ են գտել Մխիթարի «Դատաստանագրքի» «որոշ հակասություններն ու իրավաբանական անորոշ սահմանումները»:

Այդ դատողությանը հետևելով մենք Թորոսյանի գրած հոգվածները միևնույն հեղինակին չպետք է համարենք, որովհետև մի հոգվածում եղած պրնցիպները ժխտվում են մյուսում, մի հոգվածում եղած հետևությունները մերժվում են մյուսում:

Այժմ իսկ անցնենք Թորոսյանի մյուս հոգվածներին:

«Պատմա-բանասիրական հանդես»-ում տպագրված «Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձեռագրերն ու խմբագրությունները» հոգվածում, առանց ձեռագրական նոր տվյալների, նա խմբագրությունների քանակը շատացրել է. այստեղ խոսում է մի երրորդ խմբագրության մասին:

Իր հոգվածը սկսելով դարձյալ Բաստամյանցին ու Կարստին հանիրավի կշտամբելով «Դատաստանագրքի» խմբավորումները տարբերելիս ձևական մոտեցման համար, նա Ա խմբի ձեռագրերից անջատում է մի խումբ, անվանում Գ խմբագրություն: Այս Գ խմբագրությունն, ուրեմն, իբրև Ա խմբագրության ենթախումբ, չունի մասերի բաժանում:

Ըստ հոգվածի հեղինակի Գ խմբագրությունը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով.

1. «Դատաստանագրքի համարյա բոլոր հոգվածները, ներառյալ նախաղբյուրները, զգալի չափով, իսկ երբեմն նաև խիստ, համառոտված են: Հատկանշական է այն, որ համառոտելու ամբողջ աշխատանքը կատարվել է ոչ թե իրավաբանական միտքը, իրավական դրույթները կրճատելու հաշվին, այլ

³³ «Բանբեր», էջ 70:

³⁴ Նույն տեղում, էջ 70, 71:

իրավական բովանդակությունը կրոնական հավելումներից զտելու ուղղությամբ: Ճիշտ է, այս ձեռագրախմբում Դատաստանագրքի ոչ բոլոր հոդվածներն են լիովին գտված կրոնական տարրից, սակայն, նկատի ունենալով ժամանակը և նախատիպ խմբագրությունը, այն նվազագույնի է հասցված»³⁵:

Իրականության չի համապատասխանում սա: Այս ձեռագրախմբում «համարյա բոլոր հոդվածները» չեն, որ համառոտված են. համառոտված են միայն Նախագրությունը և մի երկու հոդված. հոդվածների ճնշող մեծամասնությունը գրեթե բառացի նույնն է, ինչ-որ մասերի բաժանում ունեցող տարբերակին:

Դժվար է հասկանալ, թե ինչ կնշանակի հոդվածները «զտել կրոնական տարրից»: Միջնադարյան դատաստանագրքի նկատմամբ դա հակապատմական բմբռնում է: Այդպիսի բան չի կատարված, չէր էլ կարող կատարվել. սոսկ մի երկու համառոտված հոդվածներում դուրս են մնացել աղբյուրներից՝ Կանոնագրքից և Մովսիսական օրենքներից բառացի բերված հատվածների միայն որոշ մասեր, ըստ որում այս հանգամանքը նույնիսկ այդ հոդվածների ոգին ու բովանդակությունը չեն փոխում: Ի վերջո՝ ո՞րն է այն «նախատիպ խմբագրությունը», որի համեմատությամբ այս տարբերակում «կրոնական տարրը» նվազագույնի է հասցված: Չէ՞ որ այդպիսի «նախատիպ խմբագրությունը» հայտնի չէ:

Յուրաքանչյուր ընթերցող Գ խմբագրության մեջ կատարված բոլոր փոփոխություններին կարող է ծանոթանալ Բաստամյանցի հրատարակության մեջ 488 (Մատենադարանի ձեռ. № 485) պայմանական նշանով ներկայացված այլընթերցումներից, և անմիջապես կնկատի, որ Թորոսյանի ասածը՝ ճիշտ չէ:

2. Իբրև Գ խմբագրության մի այլ առանձնահատկություն նշվում է հետևյալը. «Ա խմբագրության համեմատությամբ Գ խմբագրության մեջ խոսքը հակիրճ է, իրավաբանական միտքը՝ որոշ շափով խտացված, իրավական որոշ դրույթների անորոշ սահմանումները՝ վերացված»:

Սա ևս իրականության չի համապատասխանում: Այս ենթախմբում որոշ կրճատումներ կան. այդ մասին ասացինք, բայց դա իրավաբանական մտքի խտացում չէ, ոչ էլ «իրավական որոշ դրույթների անորոշ սահմանումների» վերացում: Այդօրինակ խմբագրման «Դատաստանագիրքը» չի ենթարկվել: Ի հաստատումն իր նշած առանձնահատկության Թորոսյանը 2 անգամ բերում է «Յաղագս դատաստանաց առն և կնոջ, որք անկար գոն լուծանել զկուսութիւն» հոդվածի հետևյալ հատվածը՝ երկու խմբագրություններով:

Ա խմբագրություն

Եւ եթէ անասուն բերեալ իցէ զգլուխորն տացեն, և զաճն յերկուս բաժանիցեն յաղագս աշխատելո ի պահելն:

Դ խմբագրություն

Եւ թէ անասուն բերեալ իցէ կինն, զգլուխքն առցէ և զկէս աճոյն և կէսն այրկանն տացի վասն աշխատութեան և ծախիցն:

Ինչպես երևում է, հոդվածի երկու խմբագրությունների բովանդակության մեջ ոչ մի տարբերություն չկա: Ի՞նչ Թորոսյանի «Ա խմբագրության նորմի ձևակերպումը հստակ չէ: Իրավաբանական անորոշությունը լայն հնարավոր-

35 «Հանդես», Իջ 138—139:

րություն է րնձեռում նորմին տալու ինչպես տարածական, այնպես էլ սահմանափակ մեկնաբանում»³⁶։ Ո՞րն է առաջինի անորոշությունը և երկրորդի որոշությունը. այն, որ առաջինում ասված է, թե անկարողության ախտի պատճառով ամուսինների բաժանման դեպքում կնոջ բերած անասունների աճր երկուսի պետք է բաժանվի, իսկ երկրորդում՝ կեսը մեկին պետք է տրվի, կեսը՝ մյուսին։ Այստեղ, իրոք, ոչ մի անորոշություն, այլև տարբերություն չկա. «յերկուս բաժանել» նշանակում է կիսել, որևէ բան երկուսի բաժանել այլ բան չի նշանակում, քան կիսել։ Բայց, ահա, դատողություն է արվում, թե «ամբողջը կարելի է բաժանել ցանկացած հարաբերությամբ՝ $\frac{2}{9}$ — $\frac{1}{9}$, $\frac{1}{3}$ — $\frac{2}{3}$, $\frac{1}{5}$ — $\frac{3}{5}$, $\frac{1}{4}$ — $\frac{3}{4}$ և այլն և այլն»։ Ըիշտ է, իհարկե, որ ամբողջը ցանկացած հարաբերությամբ կարելի է երկու մասերի բաժանել. բայց այդ չի նշանակում երկուսի բաժանել. երկուսի բաժանելը միայն կիսելն է, երկու հավասար մասերի բաժանելը։ Ուստի և թե՛ մեկ դեպքում, թե՛ մյուս դեպքում միևնույն բանն է ասված շատ պարզ ու որոշ, առանց «իրավաբանական անորոշության» և առանց հնարավորության «նորմին տալու ինչպես տարածական, այնպես էլ սահմանափակ մեկնաբանում»։ Այդ «անորոշությունը»—«յերկուս բաժանել»—որոշ ու ճիշտ է հասկացել և թարգմանել «Դատաստանագրքի» ռուսերեն թարգմանության հեղինակը, Ա. Պապովյանը (թարգմանել է поровну), բայց Թորոսյանը նրան մեղադրում է սխալ թարգմանելու մեջ³⁷։

3. Որպես Գ խմբագրության առանձնահատկություն նշված է և հետևյալը. «Դատաստանագիրքը շարադրված է ժամանակի ժողովրդական-խոսակցական լեզվով՝ միջին հայերենով»։

Ըիշտն ասած, մեզ համար անսպասելի էր նմանօրինակ մի հայտարարություն։ Հայտնի է, որ Մխիթար Գոշը միջին հայերենով ոչինչ չի գրել, և առհասարակ Արևելյան Հայաստանում ստեղծված որևէ մատենագրական երկ միջին հայերենով, գոնե XII—XIV դարերում, չենք ունեցել. միջին հայերենը գրականության լեզու է դարձել Կիլիկիայում, միջին հայերենով ստեղծագործող բոլոր հեղինակները արևմտահայեր են։ Գ խմբագրությունը միջին հայերենով չի շարադրված, սա Գոշի «Դատաստանագիրքն» է, Գոշի լեզվով գրված, միայն նախադրությունը և առաջին մի քանի հոդվածները մի փոքր համառոտված են և որոշ լեզվա-ոճական փոփոխության ենթարկված, տեղ-տեղ գրաբարյան ձևերը միջին հայերենի ձևերի փոխված են միայն այդ մասերում։ Բերենք մի երկու օրինակ.

ա) «Դատաստանագիրքը» գրելու 5-րդ պատճառը այսպես է շարադրված. «Հինգկերորդ. զի ոչ նման է իրք դատաստանին արինացն կամ մարգարէիցն կամ աւետարանին անշարժութեան, այլ զի միշտ ըստ ազգաց և աշխարհաց փոփոխին հարկաւորարար, իրաւացոյց [Քրիստոս] թողուլ հմտագունից փորձել ըստ պատահմանն»³⁸։

բ) Ամենից ավելի համառոտված են նախադրության 10-րդ գլուխը և 11-րդը՝ հիշատակարանը, որոնք միացված են և տրված մի քանի տողում.

«Յադագս քլ յորոց գրոց հաւաքեմք և գրեմք զիրս դատաստանի և կամ յոր ազգաց հաւաքեցաւ. յիշատակաւն սակաւով

³⁶ «Հանդես», էջ 144։

³⁷ Նույն տեղում, էջ 144, ծան. 13։

³⁸ Մատենադարանի ձեռ. № 2593, էջ 3բ, հմմտ. ձեռ. № 2276, էջ 3ա։

Հաւաքեցաք յառաջ յաւրինացն աստուծոյ, որ ետ Մովսէսի առաջին՝ յելից, երկրորդ արինացն և յայլոց գրոցն: Երկրորդ՝ ի կանոնաց սուրբ հարցն և յաւիտարանէն: Երրորդ. ի յամենայն սուրբ տառից ի հնոց և ի նորոց: Եւ արդ թէ՛ պէտ և համարձակեցաք մեր և զրեցաք զգիրս, սակայն և թէ հանդիպի որ իմաստուն և թիրութիւն գտցէ ի սմա՝ աղաչեմ զի լցցէ զպակասն, քան զի ամենայն զիրք ոչ թէ ի միում ժամանակի զրեալ են, այլ յայլ և յայլ ժամանակս. զնոյն և զայս ըսկիզբն եղև իմաստնոց յաղագս զմեզ յիշելոյ ի բարիս»³⁹:

Ինչպէս տեսնում ենք, բերված երկու հատվածներն էլ, որ վերաշարադրութիւնն են բնաշրի՝ հրաբարով են բերված և ոչ թե միջին հայերենով:

Այս խմբագրութիւն և միջին հայերենի տարբերութիւնը ավելի ակնառու ցուցադրելու նպատակով, այստեղ զնենք միջին հայերենով գրված մի առակ.

«Ասաց ի առակաց. թէ զայր մի հարցին, թի՛ բաղնիս տեսե՞ր ես. նա ասաց, թէ մտն այլ կերեր եմ: Դարձեալ հարցին, թի՛ զի՞նչ իրք կու նմանի. ասէ այրն, թէ հանց և զջիւր ունի, զինչ զխոզի: Ֆայնժամ ասացին շրջակայքն, թէ այս մարդս ոչ թէ միայն բաղանիսն, այլ զխոզն չէ տեսեր»⁴⁰:

Միջին հայերենը և զրաբարը շտաբներէլը ուրիշ թյուրիմացութիւն էլ է հասցրել Թորոսյանին, որի մասին մի փոքր հետո:

4. Գ խմբագրութիւն մյուս առանձնահատկութիւնը ըստ Թորոսյանի հետևյալն է. «Շինականների մասին հայտնի հոգվածը, ճորտացումն արգելող խմբագրութիւնը, տրված է հենց այս ձևադրախմբում»:

Խոսքը պատմագիտական գրականութիւն մեջ շատ շատերի ուշադրութիւնն արժանացած՝ «Դատաստանագրքի» II մասի երրորդ հոգվածի մասին է: Ըսկապէս որոշ տարբերութիւն կա այս խմբի և մյուս խմբերի ձևադրերի պահպանած՝ սույն հոգվածի տեքստերի միջև հենց բովանդակութիւն տեսակետից. քիչ թե շատ նշանակալից տարբերութիւն ունեցող երկու հատվածներից մեկն է դա: Սակայն այդ տարբերութիւնն նշանակութիւնը չպետք է գերազնահատել:

Ահա այդ հոգվածի երկու բնագրերը.

Ե խմբագրութիւն

«Ազատ յարարչէն եղև մարդկային բնութիւնս, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղև հոգոյ և ջրոյ: Եւ որք ոչ ունիցին ջուր և հող ազատ է ուր և կամեսցի գնասցէ՛ և բնակեսցէ: Եւ ոչ իրաւունք իշխանաց և թագաւորաց բռնադատել զորք կալ ի մի գեղ կամ ի մի երկիր»⁴¹:

Ա և Բ (=B) խմբագրութիւններ

«Ազատ յարարչէն եղև մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղև հոգոյ և ջրոյ: Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան զի—թողեալ գտէրունիսն ազատ է, ուր և կամեսցի կալ: Լեպա թէ այսմ ոչ ներէ որ ի տերանցն և բռնադատէ զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հօրն ազատ են որդիք ծրնեալք այլուր և ոչ անդ»⁴²:

³⁹ Մատենադարանի ձեռ. N° 2776, Էջ 25ա—25բ, հմմտ. ձեռ. N° 2593, Էջ 23բ—24ա:

⁴⁰ Ն. Մ ա ու, Փողոկածոյր առակաց Վարդանայ, II, Էջ 320:

⁴¹ Մատենադարանի ձեռ. N° N° 2593, 2750 և 16, 21-րդ հոգվածը:

⁴² «Դատաստանագիրք հայոց», Էջ 320—321:

Բերելով այս երկու բնագրերը, Թորոսյանը գրում է. «Ինչպես տեսնում էնք, գյուղացիների ճորտացումը մի դեպքում արգելվում է օրենքով, մյուս դեպքում՝ ամրապնդվում»⁴³:

Բնագրերը, սակայն, նմանօրինակ եզրակացության հիմք չեն տալիս: Ըստ բնագրերից մեկի, հող ու ջուր շունեցող գյուղացին ուր կամենա կարող է բնակվել, և ոչ ոք իրավունք չունի նրան ստիպելու հատկապես այսինչ գյուղում կամ երկրում ապրելու: Մյուսում Գոշը ասում է, պատշաճ է կարծում, որ գյուղացին ազատ է իր կամեցած տեղում ապրելու: Բայց եթե տերերից որևէ մեկը չների և բռնությամբ բերի հեռացածին («զգնացեալսն»), հոր մահվանից հետո՝ այլ վայրում ծնված որդիները ազատ են (ճորտությունից):

Երկու դեպքում էլ ճորտությունը, ճորտացումը չի ամրապնդվում օրենքով: Երկու դեպքում էլ գյուղացին ազատ է իր ցանկացած վայրում ապրելու: Ըստ երկրորդ բնագրի՝ Գոշը «պատշաճ է կարծում», որ գյուղացին ազատ լինի: Բայց իրականության մեջ այդպես չէր լինում, ուստի Գոշը պնդում է, որ գոնե հեռացած գյուղացու այլ վայրում ծնված որդիները ազատ լինեն:

Ուրեմն՝ միևնույն հողվածի երկու տարբերակները հակադիր տեսակետներ չեն արտահայտում ճորտացման կամ ճորտության մասին:

Հենց երկրորդ բնագրի հեղինակն էլ առհասարակ ճորտացմանը, ճորտությանը դեմ է. գյուղացին՝ «թողեալ զտերունիսն ազատ է ուր և կամեսցի կալ»: Սակայն Հայաստանի ոչ բոլոր մասերում է ճորտությունն ու ճորտացումը նույն բնույթն ունեցել, ավելին, Հայաստանի ոչ բոլոր մասերում է ճորտատիրական իրավունքը՝ գյուղացու անձնական կախվածությամբ դործել և եղել որպես փաստական իրականություն: Մխիթարի այդ «բայցը» («ապա թէ») հեռացածին ետ բերելիս նրա որդիների ազատ լինելու մասին՝ վերաբերում է, ամենայն հավանականությամբ, Հայաստանի հյուսիսային՝ Վրաստանին կից մասերին, Զաքարյան Հայաստանի որոշ շրջաններին: Եվ քանի որ Հայաստանի այլ մասերում գյուղացուն անձնական ազատությունից զրկող ճորտատիրական իրավունքը չի գործել, տվյալ միջավայրում կիրառվող Մխիթարի «Դատաստանագրքի» քննարկվող հողվածից հանել են հողվածի երկրորդ մասը և խմբագրել ըստ առաջին մասի, ըստ որի արգելվում է ճորտացումը:

Չենք կարող մտածել, թե Հայաստանում Գոշի ժամանակ ճորտատիրական իրավունքը լիովին գործում էր, և Գոշը, հակառակ իրականության, հակառակ ավանդական իրավունքի, արգելում է այն:

Ճորտությունն արգելող օրենքի գոյությունը «Դատաստանագրքում» նշանակ է, մի կողմից, այն բանի, որ ճորտությունը իբրև սիստեմ գոյություն չի ունեցել, մյուս կողմից՝ որ հակառակ ավանդության, ավանդական իրավունքի՝ որոշ տեղերում գյուղացին զրկվել է անձնական ազատությունից, որին և վերաբերում է «Դատաստանագրքի» քննարկվող հողվածը:

Ընթերցողը կռահում է, որ մենք քննարկվող հողվածի Ա և Բ խմբագրությունների տարբերակն ենք համարում Մխիթար Գոշին: Իսկ ո՞րն է սկզբնականը և Մխիթարինը համարում մեր հողվածագիրը և ո՞րը խմբագրվածը: Ըստ «Բանբեր»-ում տպագրած հողվածի հրկուսն էլ Մխիթար Գոշինն են, սկզբնականը այն տարբերակն է, որտեղ արգելվում է ճորտությունը, այսինքն՝ Գ խմբագրությունը, Մխիթարը հետագայում, հողևոր և աշխարհիկ վերնախավի

⁴³ «Բանբեր», էջ 59:

պահանջով խմբագրել է հոգվածը և նրա մեջ դրել ճիշտ հակառակ բովանդակություն, ըստ որի «ամրապնդվում է» ճորտությունը:

Հարցի լուսաբանման նկատառումով, անհետաքրքիր չէ այստեղ պարզել Թորոսյանի ստեղծած մի շարք խառնաշփոթություններն ու հակասությունները, որոնք կապված են հենց խնդրո առարկա հոգվածի հետ:

Վերևում նշեցինք, որ Թորոսյանի մի հոգվածում եղած պնդումները մերժվում են մյուսում, առաջինի եզրակացությունները հերքվում են երկրորդում: Նա «Բանբեր»-ում տպագրած հոգվածում ընդունում է «Դատաստանագրքի» երկու խմբագրություն, որ նշանակում է Ա և Բ (առաջինը մասերի բաժանված, երկրորդը՝ ոչ): «Հանդես»-ում տպագրված հոգվածում ընդունում է 3 խմբագրություն, որ նշանակում է Ա, Բ, Գ, ըստ որում Ա և Գ-ն Ա-ի ենթախմբերն են: Ա և Բ-ն իրաբից տարբերվում են միայն հոգվածների դասավորությամբ, իսկ Գ-ն տարբեր է Ա-ից և Բ-ից նրանով, որ հոգվածները որոշ խմբագրման են ենթարկված: Թորոսյանը «Բանբեր»-ի հոգվածում ջանում էր ապացուցել, որ սկզբնականը Ա խմբագրությունն է. բայց Ա խմբագրության ո՞ր տարբերակը նկատի ունենք՝ Ա թե՛ Գ: Պարզվում է, որ Գ: Ա խմբագրության սկզբնականը համարելու հարցում նա իր բոլոր դատողություններն անում է և եզրակացությունները հանում Գ տարբերակի ընձեռած փաստերի հիման վրա, այդ եզրակացությունների հիմնավորման համար բերած բոլոր քաղվածքները Գ տարբերակից են: Փաստերից ամենակարևորը հենց ճորտության վերաբերյալ հոգվածն է: Ծույն հոգվածի ճորտացումն արգելող տարբերակն է նա համարում սկզբնականը, իսկ Ա և Բ խմբագրություններում եղածը հետագայում հենց Մխիթարի կողմից խմբագրվածը: «Բանբեր»-ում կարդում ենք. «Հասկանալի է, որ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները շահագրգռված պետք է լինեին գյուղացիների ճորտացմամբ: Բայց ինչպես տեսանք, Դատաստանագրքի սկզբնական խմբագրությունը արգելում էր այդ՝ ոտնահարելով տիրապետող դասակարգի շահերը»⁴⁴: «Արգելում» է միայն Գ խմբագրության փոփոխակը, նրա բերած բնագիրն էլ հենց այդ փոփոխակը ներկայացնող ձեռագրերից է (№. № 2593, 2750, 3562, 3291): Պարզ է ասված՝ սկզբնականը Գ խմբագրությունն է: Այս սկզբնական խմբագրության ճորտացումն արգելող հոգվածը (իսկ հոգվածը այդ տեսքով կա միայն Գ խմբագրության մեջ), նրա կարծիքով, հետագայում հենց Մխիթարի ձեռքով խմբագրվել է և ստացել Ա և Բ խմբագրություններում ունեցած տեսքը: Բերելով այդ հոգվածի Ա և Բ տարբերակներում եղած բնագրերը, որ նույնն են, Թորոսյանը նշում է. «Բերված փաստից բխում է շատ կարևոր մի հետևություն, այն, որ Դատաստանագրքի երկրորդ (իմա՝ Ա և Բ—է. Պ.) խմբագրությունը պայմանավորող էական փոփոխություններից մեկը կատարել է ինքը՝ Մխիթարը»⁴⁵:

Հոգվածագիրը իր այս անհաճ եզրակացությամբ ավելի քան պարզում է իր միտքը, ըստ որի սկզբնականը Գ խմբագրությունն է, իսկ Ա-ն և Բ-ն հաջորդ խմբագրություններն են, դարձյալ Մխիթարի կողմից ստեղծված:

Բայց, ահա, «Հանդես»-ում տպագրված հոգվածում Թորոսյանը լուելյայն մերժում է իր կարծիքը Գ խմբագրության սկզբնականը և, առհասարակ, Մխիթար Գռչինը լինելու վերաբերյալ: Այստեղ կարդում ենք. «Մխիթար Գռչի Դա-

⁴⁴ «Բանբեր», էջ 70:

⁴⁵ Նույն տեղում, էջ 73:

տաստանագրքի Գ խմբագրությունը Պնզմվել է XIII դարի սկզբներին, հավանաբար այն ժամանակ, երբ հեղինակը գեո կենդանի էր»⁴⁶։ Այս անգամ, ուրեմն, Գ խմբագրությունը Գոշինը չէ, այն սկզբնականը չէ (չէ՞ որ «Դատաստանագիրքը» նրա կարծիքով պատրաստ էր 1184 թ., XIII դ. սկզբներից շատ առաջ), «Յաղագս դատաստանաց շինականաց» հոգվածի ճորտությունն արգելող և նախադրության մեջ աշխարհիկ իշխողների դատական իրավունքին վերաբերող հատվածի տարբերակները Գոշը չի գրել։

«Հանդես»-ի հոգվածում, ուրեմն, նա ժխտում է «Բաներ»-ի հոգվածի բոլոր հետևությունները. սակայն դրանց փոխարեն դնում է դարձյալ ոչ ճիշտ հետևություններ, սխալ պնդումներ, որոնցից մի մասի մասին խոսվեց, մյուսներին կանգրադառնանք մի այլ անդամ։

Եզրակացություններ.

1. Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» մեզ հասած ձեռագրերը բաժանվում են երեք խմբի, որոնցից մեկում (—Ա խմբագրություն⁴⁷) օրենսգիրքը բաժանված է երկու մասի՝ Եկեղեցական կանոնք և աշխարհական օրենք, իսկ մյուս երկուսը չունեն բաժանում, հոգվածները ունեն ընդհանուր համարակալում և տարբեր դասավորություն առաջին խմբի (Ա խմբագրության) համեմատությամբ։ Այս երկուսից մեկ խմբում (—Բ խմբագրություն) թեև հոգվածները վերագրասավորված են, բայց հիմնականում անփոփոխ են Ա խմբագրության համապատասխան հոգվածների համեմատությամբ, առանձին բացառություններով, որոնց մեջ որոշ փոփոխություններ կան։ Մյուս խմբում (—Գ խմբագրություն) հոգվածների դասավորությունը նույնն է, ինչ որ Բ խմբագրության մեջ, բայց նախադրությունը և մի քանի հոգվածներ ենթարկված են լեզվա-ոճական փոփոխությունների, երբեմն համառոտված են ու վերաշարադրված։

2. Ծիշտ է բանասիրության մեջ ընդունված տեսակետը, ըստ որի խմբագրությունների միջև եղած տարբերությունները միայն լեզվական-ոճական են և արտաքին-կառուցվածքային։ Եղած տարբերությունները «դասային-դասակարգային և սոցիալ-տնտեսական տարբեր շահերի արտացոլում» չեն։ Թորոսյանի կարծիքը վերջին բնույթի տարբերությունների գոյության վերաբերյալ յուրիմացություն է։

3. Ծիշտ չէ Թորոսյանի՝ Վ. Հացունուց որդեկրած կարծիքը, թե «Դատաստանագրքի» երեք խմբագրությունների հեղինակն էլ Մխիթարն է։ Այս կարծիքի հաստատման համար Թորոսյանի բերած փաստարկները ոչինչ չեն ապացուցում։ Առկա խմբագրություններից միայն մեկն է Մխիթար Գոշի գրչի արդյունքը, որից ծագել են Քյուսները⁴⁸։

4. Մխիթար Գոշը, ինչպես ինքն է հաղորդում, նպատակ է ունեցել ստեղծել աշխարհիկ դատաստանագիրք, «մարմնաւոր դատաստանի» գիրք, աշխարհիկ օրենսդրություն. նրա կազմածը մասերի բաժանում ունեցող տարբերակն է։ Հետագայում է միայն, որ երկու մասերը միավորել են, հոգվածները դա-

⁴⁶ «Հանդես», էջ 148։

⁴⁷ Մեր «Եզրակացությունների» մեջ Ա, Բ, Գ տառերով նշանակում ենք երեք խմբագրությունները՝ ըստ սրանց առաջացման հերթականության, ընդ որում Ա-ն համապատասխանում է Թորոսյանի հոգվածներում Բ տառով նշանակված խմբագրությանը, Բ-ն՝ Ա-ին և Գ-ն՝ Գ-ին։

⁴⁸ Երեք խմբագրությունների ձեռագրական ժառանգական կապի մասին մեր կարծիքը հաստատվում է ընդգրաքնական բազմաթիվ ու բազմապիսի փաստերով, որոնց մեկը մանրամասն կանդրադառնանք մի այլ անդամ։

սավորել ըստ նրանց աղբյուրների հաջորդականության, որով խախտվել է հոդվածների հեղինակային դասավորությունը և ավելի ուշ գրված հոդվածները առաջ են ընկել:

5. Մխիթար Գոշի կազմած «Դատաստանագիրքը» մեղ է հասել ոչ անաղարտ ձևով. Ա խմբագրությունը, որ ամենից ավելի մոտն է հեղինակային բնագրին, նույնպես փոփոխությունների է ենթարկված, որոշ հոդվածներ իրենց տեղերը փոխել են և այլն: «Դատաստանագիրքում» կան ցուցումներ, որոնց հիման վրա, բնագրաբնական մանրակրկիտ հետախուզումներով հնարավոր է վերականգնել հեղինակային բնագիրը, որը ունեցել է որոշակի ու հետևողական սխեմա:

6. Երբ միջնադարյան մատենագրական հուշարձանների վերաբերյալ ուսումնասիրությունը կատարվում է բանասիրության մեջ հավաստված իրողությունները դանց առնելու, փաստերը եզրակացություններին հարմարեցնելու կամ թվացական իրականություն ընդունելու ու ներկայացնելու եղանակով, մանավանդ առանց անհրաժեշտ չափով հաղթահարելու գրաբար լեզվի դժվարությունները — այդօրինակ ուսումնասիրությունը չի կարող հասնել իր նպատակին:

О РЕДАКЦИЯХ «СУДЕБНИКА» МХИТАРА ГОША

Э. А. ПИВАЗЯН

(Р е з ю м е)

Многие вопросы, касающиеся одного из ценнейших памятников средневековой армянской юриспруденции, «Судебника» Мхитара Гоша, до сих пор остаются нерешенными или спорными. Некоторые из этих вопросов затронуты в статьях сотрудника Матенадарана Х. Торосяна, опубликованных в 1963 г. («Историко-филологический журнал», № 1, «Вестник Матенадарана», № 6 и «Известия АН Армянской ССР», серия общественных наук, № 4). В указанных статьях имеются некоторые неверные высказывания и выводы.

Неверно утверждение о том, что дошедшие до нас три редакции «Судебника» коренным образом отличаются друг от друга как по форме, так и по содержанию. Давно доказано специалистами, что эти редакции отличаются друг от друга лишь перегруппировкой статей, что в одной редакции некоторые статьи только несколько переименованы или сокращены и подвергнуты стилистическим изменениям. Все изменения в редакциях ни в коем случае не отражают различных классовых интересов. Нельзя согласиться и с тем мнением, что различные редакции «Судебника» являются делом рук самого Гоша. Детальное изучение всех редакций «Судебника» показывает, что Гош — автор лишь одной из редакций.

Мхитар Гош пишет, что начал составление своего «Судебника» в 1184 г. Этот факт категорически отвергает то утверждение, что «Судебник» был завершен в 1184 г.